ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2022 թվական թիվ 316-Ա

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀՐԱՆՏԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԻ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ Ի ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի Բ. Սահակյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 3 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Հ.Ալեքսանյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

Հայկանուշ Հրանտի Ալեքսանյանին 2022 թվականի նոյեմբերի 10-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի Բ.Սահակյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

10.11.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2022թ նոյեմբերի 10
ք.Իջևան